# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ՍԵՎ-ԱՐՏ ԳՐՈՒՊ ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/1-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ1 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | |
|---|---|---|
| | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 1 | - | Մարտաբաճկոն՝ համալրումներով ՍԶ (Մարտաբաճկոն՝ տակտիկական գոտիով և պատյաններով) Մարտաբաճկոնը կազմված է դիմային, թիկունքային և երկու կողային հատվածներից, որոնք ունեն արագ անջատման, արձակման (մոլլե) համակարգեր: Դիմային և թիկունքային մասերը ուսերի վրա միմյանց ամրանում են կախաններով , որոնք , նույնպես, դիմացից ունեն արագ անջատման համակարգեր: Մարտաբաճկոնը բոլոր հատվածներում ՝ դիմային, թիկունքային, կողային, ունի արտակարված մոլլե համակարգի ամրագոտիներ: Դիմային և թիկունքային հատվածները բազմաշերտ են, ունեն սպունգային բարձիկներ, ցանցային օդափոխման շերտեր, ինքնակպչուն ժապավեններով հատվածներ, ներսի մասում ունեն զրահե վահանների տեղադրման համար նախատեսված գրպաններ, որոնք կոճկվում են (ամրանում են) նվազագույնը 4 սմ լայնքով, բարձր որակի ինքնակպչուններով: Կարերը ամուր են, ամրակարերը զիգզագաձև են: Պատրաստված է 1000 դեն նեյլոնե և/կամ 100% պոլիէսթեր նյութերից, նեյլոնե ժապավենից և պարաններից, հիմնական կարի համար օգտագործված թելի ամրության ինդեքսը՝ 1400 N , ներքին կարերի համար օգտագործված թելի ամրության ինդեքսը՝ 1000 N : ՈՒնի զույգով կրծքամասի և գոտկատեղերի արագ ամրացման-արձակման պոլիմեռային ճարմանդներ՝ նեյլոնե կախաններով, որոնք ամուր են, թույլ ճկվող, դժվար |

| | | |
|---|---|---|
| | | կոտրվող: Մարտաբաճկոնի քաշը՝ առանց ամրացվող պատյանների 2.9-3.6 կգ (ունիվերսալ չափս), դիմային և հետին վահանիկների լայնքը՝ 30-34սմ, բարձրությունը՝ 37-42 սմ: Դիմային և կողային հատվածները ունեն 4-9 հատ AK-74 ինքնաձիգի պահեստատուփերի համար նախատեսված գրպանիկներ, որոնցից 3-4 հատը՝ դիմային մասում, ունեն պահեստատուփերի ամուր ֆիքսման համակարգեր: Մարտաբաճկոնին ամրացվում են պատյաններ՝ 1 հատ՝ գոյատևման լրակազմի համար (12սմ լայնք*16սմ երկարություն*7 սմ հաստություն), 1 հատ առաջին բուժօգնության պարագաների համար (13*20*9 սմ), և 1 հատ ռադիոկայանի տեղադրման (5*10*4 սմ): Մարտաբաճկոնին ամրացված է նաև, 2 հատ 1 տեղանոց նռնակի չափսերին համարատասխան, ամուր փակվող պատյաններ, 1 հատ դատարկ պահեստատուփերի ծալովի պատյան, 1 հատ ժգուտային համակարգ (տուրնիկետ), և 2 հատ ինքնակպչուն ժապավենով ամրացվող ասեղնագործված կամ պոլուռետանային 7սմ* 13սմ չափսի տարբերանշան ( գույները, ձևը, չափսերը և գրվածքները Մատակարարին կտրամադրվեն պայմանագրի կնքումից հետո՝ անմիջապես): Տակտիկական գոտին երկշերտ է, կազմված է ներքին՝ ինքնակպչունով վրակարված ազատ ծայրերով գոտիից և արտաքին գոտիից , որի ծայրերին մետաղական կարգավորվող, ամուր ճարմանդներ են և ներսի մասից ինքնակպչուն ժապավեն: Արտաքին գոտու երեսին ամրակարված է երկշերտ մոլլէ (տակտիկական ամրացման) համակարգ: Մարտաբաճկոնի արտաքին տեսքը, ձևը, ձևվածքը ըստ Պատվիրատույի կողմից ներկայացվող նմուշի: Մարտաբաճկոնի, տակտիկական գոտիի և պատյանների գունավորումը՝ կանաչ: 180 հատի կոնքի չափսերի փոփոխման հնարավորությունը՝ 95սմ-140սմ, 35 հատինը՝ 105սմ-150սմ մնացած քանակության չափսերը՝ ունիվերսալ (75սմ-125սմ չափսի) ,: Պատյանների և աքսեսուարների չափսերի թույլատրելի շեղումը՝ 5%: Համարժեքության սկզբունքով փոխարինումը այլ չափսերի և ձևվածքի թույլատրվում է միայն Պատվիրատույի համաձայնությամբ: Փաթեթավորումը և պիտակավորումը գործարանային, ստվարաթղթե արկղերով: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

СЕВ-АРТ ГРУП ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/1-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ1 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | |
|---|---|---|
| | наименование производителя | технические характеристики |
| 1 | | |